




ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Վ Ա Ն Ք

Միջնադարյան Հայաստանի հոգևոր-եկեղեցական, կրթական-մշակութային աչքի ընկնող օջախներից է Սաղմոսավանքը:

Սաղմոսավանքի եկեղեցական համալիրը վեհորեն բարձրանում է Քասաղի կիրճի ելուտներից մեկի վրա, Աշտարակի շրջանի արևելյան կողմում, Արալի լեռան դիմաց: Այն ամբողջովին ձուլվել է տեղանքին: Բնության այս գեղատեսիլ անկյունը կառույցի համար ընտրել է Վաչուտյան իշխանական տան հիմնադիր Վաչե իշխանաց իշխանը: Նա հույակապ կառույցներով զարդարել է ԺԳ դարի սկզբներին իր ստացած տիրույթները՝ Արագածոտն և Նիգ գավառները: Եվ նրա հիմնադրած-կառուցած մշակութային օջախների մեջ ընդգծվում-առանձնանում է Սաղմոսավանքը:

Սաղմոսավանքի Կաթողիկե եկեղեցին, որ Վաչեի շինարարական արձանագրության մեջ Սուրբ Սիոն է անվանված, կառուցվել է ԺԳ դարի 10-ական թվականներին: Եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1215 թվականին: Եկեղեցու մուտքի բարավորին փորագրված է շինարարական արձանագրությունը, որով Վաչեն հայտնում է.

«ԹՎ(իւ) ՈԿԴ(1215): Ես՝ Վաչե, իշխանաց իշխան, որդի Սարգսի և ամուսին իմ Մամախաթուն... շինեցի զեկեղեցիս Ս(ուր)բ

Սիւսն ի փրկութիւն հոգոց մերոց և յիշատակ ամիրսպասալար Զաքարէի և պահպանութիւն կենաց որդոյ նորին Ծախնշահի... և ողորմութեամբ պատրոնին տվաք զգեղն Աղկունծ ի Ս(ուր)բ Սիւսն Սաղմոսավանացա»¹:

Կաթողիկե եկեղեցին չափավոր մեծության է, ներսից խաչաձև, սրածայր վեղարով: Եկեղեցու ներսում կան կրկնահարկ չորս խորան-ավանդատներ:

Դարի երեսնական թվականներին եկեղեցու արևմտյան կողմում կից կառուցվել է բավականին ընդարձակ գավիթը: Գավիթը կառուցել է Վաչե Վաչուտյանի թոռը՝ Քրդի որդի Վաչեն: Թոռ Վաչեի շինարարական արձանագրությունը փորագրված է Կաթողիկե եկեղեցու աջակողմյան ավանդատան երկրորդ հարկի բարավորի վրա: Արձանագրության համաձայն՝ «Ես՝ Վաչե, շինեցի եկեղեցիս եւ արարի արդիւնս յոյժս, եւ ետու զիմ դրամ[ագ]ին այգին Սերկ[եւ]ի եւ հաստատեցին Գ խորան զշաքաթ ար պատարագ Ա ինձ, Ա Դաթի[ն], Ա Մամախաթունին»: Այս արձանագրության բովանդակությունը բառացի կրկնվում է Վաչեի անթվակիր հիշատակարանում, որ գրվել է

¹ Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 58:

եկեղեցու գրքերի ցուցակի տակ: Ահա այդ հիշատակարանը.

«Շնորհ[ի]ւն բարերարին Ա[ստուծո]յն եւ՝ Վաչէ, որդի Քրթին, որդու Վաչէի և եղբայրն իմ 'Կաթի, և ամուսին իմ Մամախաթունն ցանկացաք զսէր Արարչին և շինեցաք սուրբ ոխոս Սաղմոսականք և ետու հալալ ընչիցն ԺՌ (10000) սպիտակ և առի մեծ պատրուկն՝ Զաքարիայէն զմուլքն Ս[ա]ղ[մո]սականից և կէսն իմ եղբորն պարոն Դաթին հոգուն որ առ Ք[րիստո]յս է փոխել: Վերստին հաստ[խա]տեցի միքի կէսն վախմ դոսն Ս[ա]ղ[մո]սականից»:

Թո՛ւ Վաչէի անունը փորագրված է նաև գավթի գմբեթածածկի մեջ ագուցված եռանկյունաձև խաչքարի եզրին. «Ս[ուր]բ նշանս տերունական [է] Վաչէին. [1]եր քաարան»:

Գավթիը պատկանում է քառասուն կառույցների թվին: Հարավային կողմում այն ունի մեծ պատուհան, որ սյունով բաժանված է երկու մասի: Պատուհանը բացվում է դեպի Արարատյան դաշտ ու Արարատ սար: Նույնպիսի պատուհաններ ունեն նաև Վաչուտյանների մյուս կառույցներից Ուշիի Սուրբ Սարգիս և Տեղերի եկեղեցիները: Գավթի շքամուտքը արևմտյան ճակատից է: Այն մուտք ունի նաև հարավային կողմից, ինչպես նաև դռնով հաղորդակից է հետագազում կառուցված գրատանը:

1250-ական թվականներին եկեղեցական այս համալիրը ամբողջացրել է թո՛ւ Վաչէի հայրը՝ Քուրդ իշխանաց իշխանը: Նա կնոջ՝ Խորիշահի համագործակցությամբ Կաթողիկե եկեղեցու և գավթի հարավային կողմում կառուցել է գրատուն-եկեղեցի՝ ի հիշատակ իր վաղամեռիկ դստեր՝ Մամախաթունի:

Այս կառույցի շինարարական արձանագրությունը փորագրվել է 1255 թվականին գրատան հարավային պատին: Գրատունը ուղղանկյուն կառույց է, գմբեթը հենված է պատերից դեպի առաստաղը ձգված չորս կոր թոփքների վրա: Վերնամասում այն նման է գավթին: Այստեղ ևս կառուցված է փոքրիկ գմբեթ: Գրատան արևելյան պատի հատվածում կառուցված է շենքի ընդհանուր չափերից դուրս ընկած և բավականին ցածր ուղղանկյուն շենք, որ դռնով հաղորդակից է գրատան հետ: Հավանաբար այս փոքրիկ շինությունը ծառայել է գրատան գրքերի պահոց:

Հիմնադրման օրվանից Սաղմոսականքը

² Խաչիկ ծ. վարդապետ, Նորագիտ մագաղաթնալեզու քարագիր ցուցակ Սաղմոսականից մատենադարանի, «Շողակաթ», հազախո. ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 169:

դարձել է հոգևոր-եկեղեցական, կրթական-մշակութային կենտրոն: Այստեղ ծավալվել է ձեռագրերի ընթերցանական և գրելու գործը: Ժամանակակիցները Սաղմոսականքի մասին նշում են մեծ սիրով: Կարապետ գրիչը 1436 թվականին արտագրած «Մաշտոցի» հիշատակարանում գրում է. «յերկնահանգ՝ տ և ի գերահոշակ ոխոսն Սաղմոսականից»³: Ժամանակի նշանավոր մշակութային կենտրոնները թվելիս ժամանակակիցները չեն մոռացել տալ նաև Սաղմոսականքի անունը: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Վարդան վարդապետ Արևելցին, երբ Հայոց կաթողիկոսի թելադրությամբ շրջեց Արևելյան Հայաստանի գլխավոր վանքերը, եղավ նաև Սաղմոսականքում⁴: 1696 թվականի մի հիշատակարանից իմացվում է, որ Ստեփանոս Սաղմոսացի կաթողիկոսի ձեռնադրությանը մասնակցած եպիսկոպոսների թվում էր «Սաղմոսականից Մարուգ վարդապետը»⁵: Մեծ էր Սաղմոսականքի գրիչների հեղինակությունը: Նրանց պատվերներ էին տալիս անգամ Սեփոփա, Սանահին վանքերի կրոնավորները, նորագավթեցիները: Սաղմոսականքում ստեղծված բիսուպանշ ձեռագրերի միայն չնչին մասն է պահպանվել ու հասել մեր օրերը: Դրանց հիմնական մասը ոչ ոք չացվել է թշնամիների ձեռքով, մի մասն ի պահվել է Սաղմոսականքի ձորի անմառնելի այրերում ու այդպես մինչև օրս մնացել անհայտ: Սաղմոսականքի գրատանը տեղեկագործած գրիչներից միայն մի քանիսի ձեռագրերն են պահպանվել: Սաղմոսականքում գրքեր, ձեռագրեր են արտագրել Աստվածատուրը (1320 թվականին), Մկրտիչ Եղեգեցին (1413 թ.), Կարապետը (1436 թ.):

ԺԳ դարի կեսերին Սաղմոսականքն արդեն այնքան մեծ անուն ուներ, որ այստեղ որոշ ժամանակով իր դպրոցը հաստատեց միջնադարի մեծ մտածող, քերական, ուսուցչապետ Վարդան վարդապետ Արևելցին: Այդ ժամանակ Վարդան Արևելցու դպրոցում էր սովորում մեր մշակույթի աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Գևորգ վարդապետ Ակնուաճին, որ կատարելագործվում էր գրչություն արվեստի մեջ: Սաղմոսականքում Գևորգը 1267 թվականին գրում-

³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, մաս Ա, Ե., 1955, էջ 465-466:

⁴ Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 310:

⁵ Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Հ. 2, Ե., 1956, էջ 423:

ավարտում է ձեռագիր ժողովածուի առաջին մասը⁶։ Ժողովածուն ամբողջապես նա ավարտում է Սաղմոսավանքից ոչ հեռու գտնվող Թեղեկաց վանքում։

Պատմիչ Զաքարիա սարկավագ Քանա-

որ երկու վանքերն էլ ունեցել են իրենց թեմական իրավասությանը ենթակա վիճակները։ Երբեմն Արագածոտն, Նիգ գավառները եղել են Հովհաննավանքի, երբեմն Սաղմոսավանքի վիճակը։ Ամեն մե-



Սաղմոսավանքի ընդհանուր տեսքը արևելքից

քեղցին սիրով է խոսում Սաղմոսավանքի, ինչպես նաև հետագայում Հովհաննավանքի առաջնորդ Նահապետ Նգացու մասին։ Գրում է, որ վերջինս եղել է ուսյալ և գրագետ, արտագրել է բազմաթիվ գրքեր, որոնք պահպանվել են ընդհուպ մինչև Զաքարիայի ժամանակները։

Սաղմոսավանքում ապրել ու ստեղծագործել են քարգործ վարպետներ։ Նրանցից երկուսի անունը պահպանվել է իրենց կերտած խաչքարերի վրա։ Դրանք են [Ա.] քույի խաչքարի հեղինակ Վարդը և գրատան արևելյան պատի մոտ գտնվող մի եպիսկոպոսի տապանաքարի գլխին դրված խաչքարի հեղինակ Նիկողոսը։

Սաղմոսավանքը եղել է եպիսկոպոսական Աթոռ։ Մեզ հասած Հովհաննավանքի և Սաղմոսավանքի կոնդակներից իմացվում է,

կը, սակայն, ունեցել է իր փոքր վիճակը։ Ապարանից մինչև Սաղմոսավանք ընկած տարածությունը կազմել է Սաղմոսավանքի վիճակը։

Սաղմոսավանքի եկեղեցական համալիրը ժամանակից քիչ է տուժել, մեր օրերն է հասել ամբողջական վիճակում։

Հոգևոր-եկեղեցական, կրթական-մշակութային այս նշանավոր օջախը՝ Սաղմոսավանքը, մեծ դեր է խաղացել միջնադարում։ Միաժամանակ այն միջնադարյան Հայաստանի ճարտարապետության զարդերից մեկըն է։

Զերապարակված արձանագրություններ Սաղմոսավանքից։

Ա. Կաթողիկե եկեղեցու ներսում, ձախակողմյան ավանդատան երկրորդ հարկի բարավորին, ԺԳ դար.

Դա[թի է խորան]ս։

Այս Դավիթը ամենայն հավանականությամբ Քուրդ Վաչուտյանի Դավիթ որդին

⁶ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1979, էջ 282։

